# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՋՐԱՐԲԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Ջրարբի
համայնք, ՀՀ, Արմավիրի մարզ, գ. Ջրարբի .

N 101
*19 նոյեմբեր 2015թ.*

ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆ
ՄԱՐԶՊԵՏ
ԱՇՈՏ ՂԱՀՐԱՄԱՆՅԱՆԻՆ

Հարգարժան պարոն Ղահրամանյան.

Ձեզ է ներկայացվում ՀՀ Արմավիրի մարզի Ջրարբիի գյուղական համայնքի ավագանու 2015 թվականի նոյեմբերի 13-ի թիվ 13 հերթական նիստի որոշումները:

Առդիր 16 թերթ:

Համայնքի ղեկավար՝ Ղազար Ղազարյան

Կատ. ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ՝ Ա. Ա[illegible]

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՋՐԱՐԲԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Ջրարբի համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, գ.Ջրարբի, ,

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

13 նոյեմբերի 2015թվականի N 54-Ա

### ԱՎԱԳԱՆՈՒ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հայաստանի Հանրապետության օրենքի 12-րդ հոդվածի հինգերորդ մասով.

### ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է

1.Հաստատել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Ջրարբիի գյուղական համայնքի 2015 թվականի նոյեմբերի 13-ի թիվ 13 հերթական նիստի օրակարգը՝ համաձայն հավելվածի:

2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Կողմ -5 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԱՆԴՐԻԱՍՅԱՆ ԱԶԱՏ
2. ԳԱԼՍՏՅԱՆ ՄԱՐԻՆԵ
3. ԳՐԻԳՈՐՅԱՆ ԱՐԱՅԻԿ
4. ԳՐԻԳՈՐՅԱՆ ԱՐՄԱՆ
5. ԽԱՉԱՏՐՅԱՆ ԱՐՄԱՆ

Համայնքի ղեկավար ՂԱԶԱՐ ՂԱԶԱՐՅԱՆ

Հավելված
Ջրաբերդի գյուղական համայնքի
ավագանու 2015 թվականի
նոյեմբերի 13-ի N 54-Ա որոշման

# ՕՐԱԿԱՐԳ

Թիվ 13 նիստի ժամը 18:00

| | |
|---|---|
| 1. ԱՎԱԳԱՆՈՒ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ: | Զեկ.Ղ.Ղազարյան |
| 2. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՋՐԱԲԵՐԴԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ ԵՎ ՎՃԱՐՆԵՐԻ 2016 ԹՎԱԿԱՆԻ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ | Զեկ.Ղ.Ղազարյան |
| 3.ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՋՐԱԲԵՐԴԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԵՎ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ՄԱՏՈՒՑՎՈՂ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԴԻՄԱՑ ԳԱՆՁՎՈՂ ՎՃԱՐՆԵՐԻ 2016 ԹՎԱԿԱՆԻ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ: | Զեկ.Ղ.Ղազարյան |
| 4.ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՋՐԱԲԵՐԴԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2014 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 5-Ի N 55-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ | Զեկ. Ղ.Ղազարյան |
| 5. ԳՈՒՅՔԻ ՁԵՌՔԲԵՐՄԱՆ ՀԱՄԱՐ ԳՈՒՄԱՐ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ : | Զեկ. Ղ.Ղազարյան |
| 6.ԴՐԱՄԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ ՄԱՍԻՆ | Զեկ. Ղ.Ղազարյան |
| 7 ՀԱՐԱՋԱՏԻՆ ԿՈՐՑՐԱԾ ԱՆԱՀԻՏ ԽԱՉԱՏՐՅԱՆԻ ԸՆՏԱՆԻՔԻՆ ԴՐԱՄԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅՈՒՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ | Զեկ. Ղ.Ղազարյան |
| 8. ԳՈՒՄԱՐ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ | Զեկ. Ղ.Ղազարյան |

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՋՐԱՐԲԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Ջրարբի համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, գ.Ջրարբի. .

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

13 նոյեմբերի 2015 թվականի N 55-Ն

### ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՋՐԱՐԲԻԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ ԵՎ ՎՃԱՐՆԵՐԻ 2016 ԹՎԱԿԱՆԻ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի առաջին մասի 18-րդ կետով և <<Տեղական տուրքերի և վճարների մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 4-րդ գլխով՝

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է

1.Հաստատել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Ջրարբիի գյուղական համայնքի վարչական տարածքում տեղական տուրքերի և վճարների 2016 թվականի դրույքաչափերը՝ համաձայն հավելվածի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

Կողմ -5 Դեմ -0 Չեռնպահ -0

1. ԱՆԴՐԻԱՍՅԱՆ ԱԶԱՏ
2. ԳԱԼՍՏՅԱՆ ՄԱՐԻՆԵ
3. ԳՐԻԳՈՐՅԱՆ ԱՐԱՅԻԿ
4. ԳՐԻԳՈՐՅԱՆ ԱՐՄԱՆ
5. ԽԱՉԱՏՐՅԱՆ ԱՐՄԱՆ

Համայնքի ղեկավար՝ ՂԱԶԱՐ ՂԱԶԱՐՅԱՆ

ՀԱՎԵԼՎԱԾ
ՋՐԱՐԲԻՐ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ
2015 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 13-Ի N 55-Ն ՈՐՈՇՄԱՆ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՋՐԱՐԲԻՐ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ ԵՎ ՎՃԱՐՆԵՐԻ 2016 ԹՎԱԿԱՆԻ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ

1. Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծին համապատասխան՝ նոր շենքերի, շինությունների (ներառյալ՝ ոչ հիմնական) շինարարության (տեղադրման) թույլտվության համար տեղական տուրքը սահմանել՝հիմնական օբյեկտների համար՝

1) մինչև 300 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող անհատական բնակելի, այդ թվում՝ այգեգործական (ամառանոցային) տների, ինչպես նաև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող և հասարակական և արտադրական նշանակության օբյեկտների համար՝ 7500 /յոթ հազար հինգ հարյուր / դրամ.

2) սույն կետի «1»-ին ենթակետով չնախատեսված օբյեկտների համար՝

ա. 201-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ 15000 /տասնհինգ հազար /դրամ.

բ. 501-ից մինչև 1000 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ 25000 /քսանհինգ հազար/ դրամ,

գ. 1001-ից մինչև 3000 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ 25000 /քսանհինգ հազար/ դրամ,

դ. 3001-ից և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ 50000 /հիսուն հազար/ դրամ.

ոչ հիմնական շինությունների տեղադրման համար՝

3) մինչև 20 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ 1500 /մեկ հազար հինգ հարյուր/ դրամ,

4) 20 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ 2500 /երկու հազար հինգ հարյուր/ դրամ:

2. Համայնքի վարչական տարածքում շենքերի, շինությունների, քաղաքաշինական այլ օբյեկտների վերակառուցման, ուժեղացման, վերականգնման, արդիականացման, աշխատանքների (բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված՝ շինարարության թույլտվություն չպահանջվող դեպքերի) համար, եթե սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծով՝

1) չի նախատեսվում կցակառույցների, վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների ( այդ թվում՝ ստորգետնյա) հետևանքով օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացում կամ շենքերի գործառական նշանակության փոփոխություն՝ 1500 /մեկ հազար հինգ հարյուր /դրամ.

2) բացի օբյեկտի վերակառուցման, ուժեղացման, վերականգնման կամ արդիականացման աշխատանքներից, նախատեսվում է նաև կցակառույցների, վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ ստորգետնյա) հետևանքով օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացում կամ շենքերի գործառնական նշանակության փոփոխություն, ապա, բացի սույն կետի «1»-ին ենթակետով սահմանված դրույքաչափի, կիրառվում են նաև նոր շինարարության համար սույն որոշման հավելվածի 1-ին կետով սահմանված նորմերը՝ օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացման կամ շենքերի գործառական նշանակության փոփոխության մասով.

3) նախատեսվում է միայն կցակառույցների, վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ ստորգետնյա) շինարարություն կամ շենքերի գործառնական նշանակության փոփոխություն, այն համարվում է նոր շինարարություն, որի նկատմամբ կիրառվում են նոր շինարարության համար սույն որոշման հավելվածի 1-ին կետով սահմանված նորմերը:

3. Համայնքի վարչական տարածքում շենքերի, շինությունների, քաղաքաշինական այլ օբյեկտների քանդման թույլտվության համար տեղական տուրքը սահմանել 2500 /երկու հազար հինգ հարյուր/ դրամ:

4. Համայնքի տարածքում տեղական տուրքը սահմանել՝

1) ոգելից և ալկոհոլային խմիչքների վաճառքի թույլտվության համար՝ հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ յուրաքանչյուր եռամսյակի համար՝ 5000 /հինգ հազար/ դրամ.

2) ծխախոտի արտադրանքի վաճառքի թույլտվության համար՝ հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ յուրաքանչյուր եռամսյակի համար՝ 5000 /հինգ հազար / դրամ:

5. Համայնքի տարածքում՝

1) բացօթյա առևտուր կազմակերպելու թույլտվության համար տեղական տուրքը սահմանել յուրաքանչյուր օրվա համար՝ 200 /երկու հարյուր / դրամ՝ մեկ քառակուսի մետրի համար.

2) հեղուկ վառելիքի, սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի մանրածախ առևտրի կետերում հեղուկ վառելիքի և (կամ) սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի և տեխնիկական հեղուկների վաճառքի թույլտվության համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանել 150000 /մեկ հարյուր հիսուն հազար/ դրամ.

3) խանութներում, կրպակներում տեխնիկական հեղուկների վաճառքի թույլտվության համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանել 30000 /երեսուն հազար/ դրամ.

4) համայնքի տարածքում հանրային սննդի կազմակերպման և իրացման թույլտվության համար տեղական տուրքը յուրաքանչյուր եռամսյակի համար սահմանել՝

ա. հիմնական շինությունների ներսում հանրային սննդի կազմակերպման և իրացման դեպքում՝ 2500 /երկու հազար հինգ հարյուր/ դրամ.

ոչ հիմնական շինությունների ներսում հանրային սննդի կազմակերպման և իրացման դեպքում՝ 1000 /մեկ հազար/ դրամ.

6.Համայնքի տարածքում թանկարժեք մետաղներից պատրաստված իրերի մանրածախ առուվաճառքի թույլտվության համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանել 50000 /հիսուն հազար/ դրամ:

7. Համայնքի տարածքում՝ առևտրի, հանրային սննդի, զվարճանքի, շահումով խաղերի և վիճակախաղերի կազմակերպման օբյեկտները, բաղնիքները (սաունաները), խաղատները ժամը 24.00-ից հետո աշխատելու թույլտվության համար՝ տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանել՝

1) առևտրի օբյեկտների համար՝ 30 000/երեսուն հազար / դրամ.

2) հանրային սննդի և զվարճանքի օբյեկտների համար՝ 50 000 /հիսուն հազար/ դրամ.

3) բաղնիքների (սաունաների) համար՝ 200 000 /երկու հարյուր հազար/ դրամ.

4) խաղատների կազմակերպման համար՝ 500 000 /հինգ հարյուր հազար/ դրամ.

5) շահումով խաղերի կազմակերպման համար՝ 250000 /երկու հարյուր հիսուն հազար/ դրամ.

6) վիճակախաղերի կազմակերպման համար՝ 100 000 /մեկ հարյուր հազար/ դրամ:

8. Համայնքի տարածքում յուրաքանչյուր ամսվա համար արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության համար մեկ քառակուսի մետրի տեղական տուրքը սահմանել՝

1) ալկոհոլային սպիրտի պարունակությունը մինչև 20 ծավալային տոկոս արտադրանք գովազդող արտաքին գովազդի համար՝ 1500 / մեկ հազար հինգ հարյուր/ դրամ.

2) թունդ ալկոհոլային (սպիրտի պարունակությունը 20 և ավելի ծավալային տոկոս) արտադրանք գովազդող արտաքին գովազդի համար՝ 2500/երկու հազար հինգ հարյուր/ դրամ.

3) այլ արտաքին գովազդի համար՝ 1000/մեկ հազար / դրամ.

4) մինչև 2006 թվականի հոկտեմբերի 1-ը՝ ծխախոտի արտաքին գովազդի համար՝ 3000 /երեք հազար/ դրամ.

5) դատարկ գովազդային վահանակների համար՝ 700 /յոթ հարյուր/ դրամ:

9. Համայնքի արխիվից փաստաթղթերի պատճեններ և կրկնօրինակներ տրամադրելու համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանել՝ 1000 /մեկ հազար / դրամ:
10.Համայնքի անվանումը ֆիրմային անվանումներում օգտագործելու թույլտվության համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանվում է 50000 /հիսուն հազար/ դրամ:
11. Համայնքի տարածքում մարդատար տաքսու (բացառությամբ երթուղային տաքսիների) ծառայություն իրականացնելու թույլտվության համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանել 5000/հինգ հազար /դրամ:
12. Համայնքի տարածքում քաղաքացիական հոգեհանգստի (հրաժեշտի) ծիսակատարության ծառայություններ իրականացնելու և (կամ) մատուցելու թույլտվության համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանել 5000/հինգ հազար /դրամ:
13. Համայնքի տարածքում մասնավոր գերեզմանատան շահագործման թույլտվության համար տեղական տուրքը սահմանել է յուրաքանչյուր տարվա համար՝
1) 3 հա-ից մինչև 5 հա մակերես ունեցող գերեզմանատների համար՝ 2.500.000 /երկու միլիոն հինգ հարյուր հազար/ դրամ.
2) 5 հա-ից մինչև 7 հա մակերես ունեցող գերեզմանատների համար՝ 5.000.000 /հինգ միլիոն/ դրամ.
3) 7 հա-ից մինչև 10 հա մակերես ունեցող գերեզմանատների համար՝ 7.000.000 դրամ /յոթ միլիոն/ դրամ.
դ) 10 հա-ից ավել մակերես ունեցող գերեզմանատների համար՝ 10.000.000 /տաս միլիոն:
14. Գյուղապետարանի տնօրինության և օգտագործման տակ գտնվող հողերը հատկացնելու, հետ վերցնելու և վարձակալության տրամադրելու դեպքերում անհրաժեշտ չափագրական և այլ նման աշխատանքների համար՝ տեղական ինքնակառավարման մարմնի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար 5000 /հհինգ հազար/ դրամ :
15 . Տեղական ինքնակառավարման մարմինների կողմից մրցույթներ և աճուրդներ կազմակերպելու հետ կապված ծախսերի փոխհատուցման համար՝ մասնակիցներից վճար 5000 /հինգ հազար /դրամ:
16. Աղբահանության ծառայության համար սահմանել վճարի հետևյալ դրույքաչափերը,
1) կենցաղային աղբի համար՝
ա. համայնքում բնակվող յուրաքանչյուր բնակչի համար՝ ամսական 10 (տաս) դրամ,
բ. ըստ բնակելի շինության կամ բնակարանի ընդհանուր մակերեսի՝ մեկ քառակուսի մետր մակերեսի համար 1(մեկ ) դրամ.
2) ոչ կենցաղային և խոշոր եզրաչափի աղբի համար՝
ա. ըստ ծավալի՝ մեկ խորանարդ մետր աղբի համար՝ 500 (հինգ հարյուր) դրամ:

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՋՐԱՐԲԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Ջրարբի համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, գ.Ջրարբի, .

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

13 նոյեմբերի 2015 թվականի N 56-Ն

### ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՋՐԱՐԲԻԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԵՎ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ՄԱՏՈՒՑՎՈՂ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԴԻՄԱՑ ԳԱՆՁՎՈՂ ՎՃԱՐՆԵՐԻ 2016 ԹՎԱԿԱՆԻ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի առաջին մասի 19-րդ կետով, հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկությունը.

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Ջրարբիի գյուղական համայնքի կողմից 2016 թվականին մատուցվող ծառայությունների դիմաց գանձվող վճարների դրույքաչափերը N 1 հավելվածի:
2.Հաստատել <<Ջրարբի համայնքի մանկապարտեզ>> համայնքային ոչ առևտրային կազմակերպության կողմից 2016 թվականին մատուցվող ծառայությունների դիմաց գանձվող վճարների դրույքաչափերը և կիրառվող զեղչերի չափերը՝ համաձայն N 2 հավելվածի:
3. Հաստատել <<Ջրարբի համայնքի մանկապարտեզ>> համայնքային ոչ առևտրային կազմակերպության կողմից 2016 թվականին մատուցվող ծառայությունների դիմաց գանձվող վճարների դրույքաչափերը և կիրառվող զեղչերի չափերը՝ համաձայն N 3 հավելվածի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

Կողմ -5 Դեմ -0 Չեռնպահ -0

1. ԱՆԴՐԻԱՍՅԱՆ ԱՋԱՏ
2. ԳԱԼՍՏՅԱՆ ՄԱՐԻՆԵ
3. ԳՐԻԳՈՐՅԱՆ ԱՐԱՅԻԿ
4. ԳՐԻԳՈՐՅԱՆ ԱՐՄԱՆ
5. ԽԱՉԱՏՐՅԱՆ ԱՐՄԱՆ

Համայնքի ղեկավար ՂԱԶԱՐ ՂԱԶԱՐՅԱՆ

ՀԱՎԵԼՎԱԾ N1
ՋՐԱՐԲԻԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ
2015 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 13-Ի N 56-Ն ՈՐՈՇՄԱՆ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐ ՄԱՐԶԻ ՋՐԱՐԲԻԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԿՈՂՄԻՑ ՄԱՏՈՒՑՎՈՂ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԴԻՄԱՑ ԳԱՆՁՎՈՂ ՎՃԱՐՆԵՐԻ 2016 ԹՎԱԿԱՆԻ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ

1. Համայնքի բնակիչ համարվող անձանց կտակը վավերացնելու դեպքում սահմանել 5000 (հինգ հազար) դրամ ծառայության վճար :

2. Համայնքի բնակիչ համարվող անձանց լիազորագրեր տալու դիմաց ծառայությունների վճարը սահմանել՝

1) տրանսպորտային միջոց վարելու իրավունք ստանալու համար՝ 5000 (հինգ հազար) դրամ.

2) աշխատավարձ և աշխատանքային հարաբերությունների հետ կապված այլ վճարներ ստանալու համար՝ 3500 (երեք հազար հինգ հարյուր) դրամ.

3) նպաստներ և կրթաթոշակներ, քաղաքացիների՝ բանկային ավանդներ ու փոստային առաքումներ (այդ թվում դրամական և ծանրոցային) ստանալու համար՝ 3500 (երեք հազար հինգ հարյուր):

ՀԱՎԵԼՎԱԾ N2
ՋՐԱՐԲԻԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ
2015 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 13-Ի N 56-Ն ՈՐՈՇՄԱՆ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՋՐԱՐԲԻԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ <<ՋՐԱՐԲԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶ>> ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ՄԱՏՈՒՑՎՈՂ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԴԻՄԱՑ ԳԱՆՁՎՈՂ ՎՃԱՐՆԵՐԻ 2016 ԹՎԱԿԱՆԻ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ԵՎ ԿԻՐԱՌՎՈՂ ԶԵՂՉԵՐԻ ՉԱՓԵՐԸ

1. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Ջրարբիի գյուղական համայնքի «Ջրարբի համայնքի մնկապարտեզ» համայնքային ոչ առևտրային կազմակերպություն հաճախող մեկ երեխայի ամսական վարձավճարի չափը սահմանել 4500 (չորս հազար հինգ հարյուր) դրամ:

2. Սահմանել վարձավճարի զեղչ 50 %-ի չափով՝ հետևյալ դեպքերում.

1) միևնույն ընտանիքից երեք և ավելի երեխա մանկապարտեզ հաճախելու դեպքում՝ երրորդ և յուրաքանչյուր հաջորդ երեխայի համար.

2) հաշմանդամ ազատամարտիկների ընտանիքների երեխաների համար.

3) միակողմանի ծնողազուրկ երեխաների համար :

3. Երկկողմանի ծնողազուրկ երեխաներն ազատվում են վարձավճարից :

ՀԱՎԵԼՎԱԾ N3
ՋՐԱՐԲԻԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ
2015 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 13-Ի N 56-Ն ՈՐՈՇՄԱՆ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՋՐԱՐԲԻԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ <<ՋՐԱՐԲԻԻ ՄՇԱԿՈՒՅԹԻ ՏՈՒՆ>> ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ՄԱՏՈՒՑՎՈՂ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԴԻՄԱՑ ԳԱՆՁՎՈՂ ՎՃԱՐՆԵՐԻ 2016 ԹՎԱԿԱՆԻ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ԵՎ ԿԻՐԱՌՎՈՂ ՁԵՌՁԵՐԻ ՉԱՓԵՐԸ

1. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Ջրարբիի գյուղական համայնքի «Ջրարբիի մշակույթի տուն» համայնքային ոչ առևտրային կազմակերպության կողմից կազմակերպվող շախմատի պարապմունքների հաճախող երեխայի ամսական վարձավճարի չափը սահմանել 3500 (երեք հազար հինգ հարյուր) դրամ:

2. Սահմանել վարձավճարի զեղչ 50 %-ի չափով՝ հետևյալ դեպքերում.

1) միևնույն ընտանիքից երեք և ավելի երեխա շախմատի պարապմունքներին հաճախելու դեպքում՝ երրորդ և յուրաքանչյուր հաջորդ երեխայի համար.

2) հաշմանդամ ազատամարտիկների ընտանիքների երեխաների համար.

3) միակողմանի ծնողազուրկ երեխաների համար :

3. Երկկողմանի ծնողազուրկ երեխաներն ազատվում են վարձավճարից :

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՋՐԱՐԲԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Ջրարբի համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, գ.Ջրարբի, .

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

13 նոյեմբերի 2015 թվականի N 57-Ն

### ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՋՐԱՐԲԻԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2014 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 5-Ի N 55-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի առաջին մասի 3-րդ կետով և <<Իրավական ակտերի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 56-րդ հոդվածի երկրորդ մասով, 70-րդ հոդվածի առաջին մասի 1-ին կետով, 5-րդ մասով.

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է

1.Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Ջրարբիի գյուղական համայնքի ավագանու 2014 թվականի դեկտեմբերի 5-ի <<Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Ջրարբիի գյուղական համայնքի 2015 թվականի բյուջեն հաստատելու մասին>> N 55-Ն որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունը.

1) 01 բաժնի 1-ին խմբի 1-ին դասի 5113 հոդվածը պակասեցնել 496,0 հազար դրամով.

2) հողի օտարումից եկամուտ նախատեսել 212,7 հազար դրամ և բաշխել

ա. 01 բաժնի 6-րդ խմբի 1-ին դասի 5112 հոդվածը ավելացնել 208,7 հազար դրամով.

բ.01 բաժնի 6-րդ խմբի 1-ին դասի 5122 հոդվածն ավելացնել 500,0 հազար դրամով.

3) 10 բաժնի 7-րդ խմբի 1-ին դասի 4819 հոդվածը պակասեցնել 150,0 հազար դրամով.

4) 01 բաժնի 1-ին խմբի 1-ին դասի 4237 հոդվածն ավելացնել 150,0 հազար դրամով.

5) պետական բյուջեից համայնքի վարչական բյուջեին տրամադրվել է այլ դոտացիա 2129.2 հազար դրամ, որը նախատեսել եկամուտ և բաշխել՝

ա. 01 բաժնի 1-ին խմբի 1-ին դասի 4111 հոդվածն ավելացնել 334,0 հազար դրամով.

բ. 01 բաժնի 1-ին խմբի 1-ին դասի 4112 հոդվածն ավելացնել 595,0 հազար դրամով.

գ. 01 բաժնի 1-ին խմբի 1-ին դասի 4212 հոդվածն ավելացնել 400,0 հազար դրամով.

դ 01 բաժնի 6-րդ խմբի 1-ին դասի 4239 հոդվածն ավելացնել 300,0 հազար դրամով.

ե. 01 բաժնի 9-րդ խմբի 1-ին դասի 4239 հոդվածն ավելացնել 300,0 հազար դրամով.

զ. 06 բաժնի 4-րդ խմբի 1-ին դասի 4269 հոդվածն ավելացնել 200.2 հազար դրամով:

**2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:**

Կողմ -5 Դեմ -0 Չեռնպահ -0

1. ԱՆԴՐԻԱՍՅԱՆ ԱԶԱՏ
2. ԳԱԼՍՏՅԱՆ ՄԱՐԻՆԵ
3. ԳՐԻԳՈՐՅԱՆ ԱՐԱՅԻԿ
4. ԳՐԻԳՈՐՅԱՆ ԱՐՄԱՆ
5. ԽԱՉԱՏՐՅԱՆ ԱՐՄԱՆ

**Համայնքի ղեկավար՝** ՂԱԶԱՐ ՂԱԶԱՐՅԱՆ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՋՐԱՐԲԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Ջրարբի համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, գ.Ջրարբի, .

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

13 նոյեմբերի 2015 թվականի N 58-Ն

### ԳՈՒՅՔԻ ՁԵՌՔԲԵՐՄԱՆ ՀԱՄԱՐ ԳՈՒՄԱՐ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի առաջին մասի 5-րդ կետով և հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկությունը համայնքում շախմատի նկատմամբ առանձնահատուկ վերաբերմունք և հետաքրքրություն ցուցաղրելու նպատակով

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է

1. <<Ջրարբիի մշակույթի տուն>> համայնքային ոչ առևտրային կազմակերպությունում շախմատի պարապունքներ կազմակերպելու համար անհրաժեշտ գույք ձեռք բերելու նպատակով Ջրարբիի գյուղական համայնքի բյուջեով նախատեսված 5122 <<վարչական սարքավորումներ>> հոդվածից հատկացնել 500000 /հինգ հարյուր հազար/ դրամ գումար :

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Կողմ -5 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԱՆԴՐԻԱՍՅԱՆ ԱՋԱՏ
2. ԳԱԼՍՏՅԱՆ ՄԱՐԻՆԵ
3. ԳՐԻԳՈՐՅԱՆ ԱՐԱՅԻԿ
4. ԳՐԻԳՈՐՅԱՆ ԱՐՄԱՆ
5. ԽԱՉԱՏՐՅԱՆ ԱՐՄԱՆ

Համայնքի ղեկավար՝ ՂԱԶԱՐ ՂԱԶԱՐՅԱՆ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՋՐԱՐԲԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Ջրարբի համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, գ.Ջրարբի, .

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
13 նոյեմբեր 2015թվականի N 59-Ա

### ԴՐԱՄԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի առաջին մասի 5-րդ կետով.

### ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է

1. Ջրարբիի գյուղական համայնքի սոցիալապես անապահով չորս ընտանիքի տրամադրել դրամական օգնություն համաձայն հավելվածի:

2.Սույ որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Կողմ -5 Դեմ -0 Չեռնպահ -0

1. ԱՆԴՐԻԱՍՅԱՆ ԱՋԱՏ
2. ԳԱԼՍՏՅԱՆ ՄԱՐԻՆԵ
3. ԳՐԻԳՈՐՅԱՆ ԱՐԱՅԻԿ
4. ԳՐԻԳՈՐՅԱՆ ԱՐՄԱՆ
5. ԽԱՉԱՏՐՅԱՆ ԱՐՄԱՆ

Համայնքի ղեկավար ՂԱԶԱՐ ՂԱԶԱՐՅԱՆ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՋՐԱՐԲԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Ջրարբի համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, գ.Ջրարբի. .

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

13 նոյեմբերի 2015թվականի N 60-Ա

### ՀԱՐԱԶԱՏԻՆ ԿՈՐՑՐԱԾ ԱՆԱՀԻՏ ԽԱՉԱՏՐՅԱՆԻ ԸՆՏԱՆԻՔԻՆ ԴՐԱՄԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅՈՒՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի առաջին մասի 5-րդ կետով և հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկությունը.

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է

1.Հարազատին կորցրած՝ Ջրարբիի գյուղական համայնքի բնակիչներ Անահիտ Սահակյանի ընտանիքին դրամական աջակցություն տրամադրելու նպատակով համայնքի բյուջեից հատկացնել 50000 (հիսուն հազար ) դրամ գումար:

2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Կողմ -5 Դեմ -0 Չեռնպահ -0

1. ԱՆԴՐԻԱՍՅԱՆ ԱՋԱՏ
2. ԳԱԼՍՏՅԱՆ ՄԱՐԻՆԵ
3. ԳՐԻԳՈՐՅԱՆ ԱՐԱՅԻԿ
4. ԳՐԻԳՈՐՅԱՆ ԱՐՄԱՆ
5. ԽԱՉԱՏՐՅԱՆ ԱՐՄԱՆ

Համայնքի ղեկավար ՂԱԶԱՐ ՂԱԶԱՐՅԱՆ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՋՐԱՐԲԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Ջրարբի համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, գ.Ջրարբի, ,

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

13 նոյեմբերի 2015 թվականի N 61-Ա

### ԳՈՒՄԱՐ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի առաջին մասի 5-րդ կետով և հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկությունը

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է

1. Ջրարբի գյուղական համայնքի Ս.Խաչատրյան փողոցում ջրահեռացման նոր համակարգ կառուցելու համար համայնքի բյուջեով նախատեսված 5112 <<Շենքերի և շինությունների կառուցում>> հոդվածից հատկացնել 200000 /երկու հարյուր հազար/ դրամ գումար :

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Կողմ -5 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԱՆԴՐԻԱՍՅԱՆ ԱԶԱՏ
2. ԳԱԼՍՏՅԱՆ ՄԱՐԻՆԵ
3. ԳՐԻԳՈՐՅԱՆ ԱՐԱՅԻԿ
4. ԳՐԻԳՈՐՅԱՆ ԱՐՄԱՆ
5. ԽԱՉԱՏՐՅԱՆ ԱՐՄԱՆ

Համայնքի ղեկավար ՂԱԶԱՐ ՂԱԶԱՐՅԱՆ